***509. ԳՅՈՒՂԱՄԻՋԻ ԵԿԵՂԵՑՈՒ** ներսում՝ ավազանի կամարի վրա.*

Շնորհօք ամենազօրին Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ի թուականի մարդեղության բանին Աստուծոյ :ՌՈՂԲ:, ի հայկական տումարի :ՌՃԽԱ: (1692) շինեցավ սուրբ եկեղեցիս յանուն սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի.

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ Ե, 298։ Ալիշան, 158։

***510. ՆՈՒՅՆ ԵԿԵՂԵՑՈՒ** ավազանի վրա.*

Կանգնեցաւ աւազան սուրբ մկրտության հոգվոյ և թողության մեղաց . . .

Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1888, թիվ Ե, 298։ Ալիշան, 158։

30. ԹԱՌԱԹՈՒՄԲ ԳՅՈՒՂ

***511. ԽԱՉՔԱՐ**, փոքր, ընկած է գյուղի վարելահողերի մեջ, ստորին մասում, 2 տող.*

ԵՍՈՍՔԱՆԿԱՆԳՆԵՑԻԶԽԱՉՍԻԲԱՐԵԽԱՒՍԾՆՈՂԱՑ
ԻՄՈՑՎԱՐԴԱԵՒՈՎՍԷՓԱ·ԹՎ·Չ:

ԵՍ ՈՍՔԱՆ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍ ԾՆՈՂԱՑ| ԻՄՈՑ
ՎԱՐԴԱ ԵՒ ՈՎՍԵՓԱ. ԹՎ. :Չ: (1251)

Ծանոթ. *Գծագիրն ստացել ենք Հ. Եղիազարյանից։*

31. ՀՈՐՍ

Այս գյուղում պահպանվել են արձանագրություն ունեցող երեք խաչքարեր միայն։ Շատ արժեքավոր է գյուղամիջում պահպանված մի հին բնակելի տուն, որը բաղկացած է եղել երկու մասից՝ բուն տունը և նրա առաջին սրահ։ Վերջինս այժմ ավերակ է, իսկ տունը օգտագործվում է։ Տունը երկարավուն հատակագիծ ունեցող բավական մեծ դահլիճ է. ծածկը կրել են երկու շարքի փայտե սյուները, որոնց լավ մշակված քարե պատվանդանները մնում են տեղում։ Դահլիճի մի ծայրը բարձր է բեմի նման. հյուսիսային պատի մեջ կա խարույկ (բուխարի) և պատերին մի քանի պատրհաններ։ Մուտքը հարավային պատի մեջ է և լավ ձևավորված։

Տեղական ավանդությունն այս տունը համարում է Ջևսար Օրբելյանի ղարպասը (ապարանքը)․ արձանագրությունների մեջ էս թե Ջեսարի անունը կա և թե նրա կնոջ՝ Խորիշահի։ Բոլոր դեպքերում տունը XIII—XIV դդ. քաղաքացիական ճարտարապետության լավագույն նմուշ է։

Հորս գյուղը հիշատակված է Ս. Օրբելյանի ցուցակի մեջ, 12 չափ հարկով, որից երևում է, որ մեծ գյուղերից մեկն է եղել։

***512. ԽԱՉՔԱՐ**, գտնվում է գյուղի մեջ, մի բակում, ընկած պատվանդանի մոտ. ստորին մասում, 5 տող.*

ԹՎ ՉՂԸ
ԻՇԽ ԱՆՈՒ
ԹԲ ՊԱՐՉԷՍԱՐԻՆԵՍՏ
ԻՐԻԿԱԿՆԵՑԻԶԽԱՍՓՐԿ
ՈՒԹԻՀՈԳՈՅԻՄ ՈՅ

ԹՎ. :ՉՂԸ: (1349)| ԻՇԽԱՆՈՒ|ԹԲ. ՊԱՐՈՆ
ԶԷՍԱՐԻՆ. ԵՍ Տ|ԻՐԻ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ
Ի ՓՐԿ|ՈՒԹԻ ՀՈԳՈՑ ԻՄՈՅ:

Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879 № 1, 108։ Ալիշան, 181։

Լուսանկ. 190